ՔԱՋԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՍՄՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/10.2

ք. Քաջարան «13» մայիս 2020թ.

«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ը, ի դեմս տնօրեն Արմեն Ղահրամանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նատալի ֆարմ»ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա.Ասատրյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 [illegible] (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալով, ժամկետում և հասցեով [illegible] մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տույժերը.

գ) հրաժարվել պայմանագրի կատարումից և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ [illegible] 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __5__ օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն [illegible] ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

[illegible]

[illegible]

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է, համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, [illegible]

[illegible]

պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 205467 (երկու հարյուր հինգ հազար չորս հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված տեսքով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը (գործողության իրականացման ձևանմուշը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այն (ընդունելու մերժում):

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար

հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով

անձի, առանց պայմանական կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում

---

[21] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մաս:

Արգելվում է, պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) [illegible] պայմանագրի կողմերի միջև առաջացած պարտավորությունները սահմանալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ	«Նատալի Ֆարմ»ՍՊԸ
[illegible]	Հանրապետության Օհանովի 15/1
[illegible]	Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 15700254021700100	h/h 15700050653300100
ՀԿՀՀ 09417527	ՀԿՀՀ 01222567
Տնօրեն Ա.Ղահրամանյան	Տնօրեն Ա.Անանտրյան
----------	----------
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Տ[illegible]ԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄ[illegible] ԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դ[illegible]մ

[illegible]րավերով նախատեսված չափաբաժնի համարը	[illegible]ումների կլանով նախատեսված [illegible]ջանցիկ [illegible]ծկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգ[illegible]ն (CPV)	անվանումը	ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը **	[illegible]եխնիկական [illegible]նութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհ[illegible] գին[illegible] դր[illegible]	ընդհանուր քանակը	մատակարար[illegible]ն: հասցեն	մատակարար[illegible]ն: ենթակա քանակը	մատակարար[illegible]ն: ժամկետը***
1	[illegible]3621280/2	Վալոկորդին 22հկ 20 մլ	Կրեվել Մոզելբախ ԳմբՀ	[illegible]ֆ[illegible]որոմիզովալերատ [illegible]ետ[illegible]ոբարբիտալ [illegible]4 [illegible]գ/մլ+18,4մգ/մլ; [illegible]ն ապակե 22հկ [illegible]ղ[illegible]իներ ներքին [illegible]ն[illegible]ման (լուծույթ)	հատ	985.0	4925[illegible]00	50	Մատակարարումն իրականացվում է մատակարարի կողմից` ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Քաջարան, Բակունցի 1,«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ-ի հասցեով	Համաձայն պատվերի: Գնման ենթակա ապրանքների քանակները համարվում են առավելագույն մատակարարվող քանակներ` որոնք ըստ կարիքի կարող են նվազել	Պայմանագիրը կնքելու օրվանից հաշված 20 օրացուցային օր հետո՝1-ին փուլի համար /եթե մատակարարը չի համաձայնվում մատակարարել ավելի շուտ/, մյուս փուլերի դեպքում՝յուրաքանչյուր անգամ **Պատվիրատուից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացում:**
2	[illegible]3621270/3	Վալիդոլ դ/պ 10 մգ №20	Մարբիոֆարմ ԲԲԸ	[illegible]նթոլի լուծույթ [illegible]ն [illegible]թիլ [illegible]ր [illegible]լերաթթվում [illegible]0 [illegible]գ; [illegible]ր պատիճներ	հատ	21.1	632[illegible]0	300			
4	[illegible]3611240/3	Ածուխ ակտիվացված դ/հ 0.25 գ № 10	Իրբիտսկի Քիմիադեղագործական գործարան ԲԸ	[illegible]ծ[illegible]խ ակտիվացված [illegible]ր[illegible]հատեր 250մգ	հատ	2.2	645[illegible]	300			
12	[illegible]3621360/4	Նիտրոմինտ ցողացիր 10գ	Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ	[illegible]ն[illegible]րոգլիցերին [illegible]4[illegible]գ/դեղաչափ; 10մլ [illegible]լ[illegible]ստիկե տարա [illegible]00 դեղաչափ); [illegible]ր[illegible]աշիթ [illegible]լեզվային [illegible]ր[illegible]աչափված	հատ	1664.2	499[illegible]9	3			
15	[illegible]3661126[illegible]3	Ցիտրամոն Պ դ/հ № 6	Իրբիտսկի Քիմիադեղագործական	[illegible]ց[illegible]տիլսալիցիլաթ[illegible] [illegible]ն [illegible]ն[illegible]ռացետամոլ, [illegible]ո[illegible]ֆեին (կոֆեինի	հատ	5.3	159[illegible]0	300			

				գործարան ԲԸ	մոնոհ... րատ) դեղա... տեր 240մգ ...80մգ+30մգ						
16	3 /...	1176	Գլիցերին մոմիկ 1գ № 10	Մեդիկալ Հորիզոն ՍՊԸ	գլիցեր... մոմիկներ ուղիղ... իքային 1000մ...	հատ	114.3	2286.4...	20		
18	3 /...	1212	Տուրբո Սիկրոն Զի դ/հ № 60	ԳՄ Ֆարմասյուտիկալս ՍՊԸ	դիոսմ... հեսպ... րդին 250 մգ	հատ	94.1	16929....	180		
19	3 3	181	Թեոտարդ դ/պ 200մգ № 40	ԿՌԿԱ դ.դ., Նովո մեստո	թեոֆի... ն 200մգ; դեղա... տիճներ կարգ... որվող ձերբա... ատմամբ	հատ	36.8	5521.5...	150		
26	3 /...	1125	Սպազմատոն դ/հ №50	Բորիսովյան բուժպատրաստուկների գործարան ԲԲԸ	մետա... զոլ (մետա... զոլ նատր... ում), պիտո... նոն (պիտո... նոնի հիդրո... որիդ), ֆենպի... երինիումի բրոմի... 500մգ ...5մգ+0,1մգ; դեղա... տեր	հատ	13.6	67900....	5000		
31	3 /...	1122	Պենտալգին թ/պ դ/հ №12	Ֆարմստանդարտ-Լեկրեդստվա ԲԲԸ	պարա... ետամոլ, նապր... քսեն, կոֆեի... դրոտա... վերին (դրոտ... վերինի հիդրո... որիդ), ֆենիր... մին (ֆենիր... մինի մալեա... ո) 325մգ ...100մգ+50մգ +40մգ ...10մգ; դեղա... տեր թաղա... թապատ	հատ	69.6	41736....	600		
32	3... (...	136	Դիտիլին ամպ. 20մգ/մլ 5 մլ №10	Բելմեդպրեպարատի ՀՈՒՁ	սուքս... մեթոնիում (սուքս... մեթոնիումի յոդիդ ...20մգ/մլ ամպ... եր 5մլ,	հատ	276.5	8295.0...	30		

**Ծանոթությունները

*Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը

Ա. 2,5 տարուց ավելի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 2 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ,

Բ. մինչև 2,5 տարի պիտանիության ժամկետ ունեցող դեղերը հանձնելու պահին պետք է ունենան առնվազն 12 ամիս մնացորդային պիտանիության ժամկետ,

* Որակի սերտիֆիկատների առկայություն

*Ծանոթություն – Դեղանյութերի առարկաների հատկանիշները պահանջ կամ նշում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանման, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին, արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ առանց դրանց գնման առարկայի բնութագրումն առանց դրանց հնարավոր չէ կամ դժվարանում է կարդալ «կամ համարժեք» բառերի օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագրումը։ Համաձայն (Օրենքի Հոդված 13, Կետ 5)

***Մատակարարումը իրականացվում է մատակարարի կողմից՝ՀՀ Արարատի մարզ, ք.Քաջարան, Բակունցի 1 «Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ հասցեով, աշխատանքային օրերին և աշխատանքային ժամերին՝ 09:00-17:00:

****Ապրանքների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հետո յուրաքանչյուր անգամ Գնորդից պատվերը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ Գնորդի կողմից պատվիրված քանակին և տեսակին համապատասխան:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Քաջարանի բժշկական կենտրոն»ՓԲԸ	«Նատալի ֆարմ»ՍՊԸ
Հասցե՝ ք.Քաջարան, Բակունցի 1	Հասցե՝ ք.Երևան,Օհանովի 15/1
Բանկ՝ «Ամերիաբանկ»ԲԲԸ	Ամերիաբանկ ՓԲԸ
հ/հ 1570025402170100	հ/հ 1570005065330100
ՀՎՀՀ 09417527	ՀՎՀՀ 01222567
Գրեն Ա.Դահիրամանյան	Տնօրեն Ա. Ասատրյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավ
« » մայիս 2021 թ
ՍՄՔԲԿ ԳՀԱՊՁԲ-21/10 ծածկագրով պայ նագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

						Ապրանքի									
			դիմաց վճարում			նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ մսների, այդ թվում**									
հիրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումներ պլանով նախատես միջանցի ծածկագիր ըստ ԳՄՍ դասակարգ (CPV)	անվանումը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս		սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	դրամենը
1	3362128	Վալոկորդին շշիկ 20 մլ				24625	24625	24625	36937.5	36 7	36937.5	49250	49250	49250	49250
2	3362127	Վալիդոլ դ/պ 10 մգ №20				3160.5	3160.5	3160.5	4740.75	47 7	4740.75	6321	6321	6321	6321
4	33611240	Ածուխ ակտիվացված դ/հ 0.25 գ № 10				322.5	322.5	322.5	483.75	4 7	483.75	645	645	645	645
12	33621360	Նիտրոմինտ ցողացիր 10գ				6.345	2496.345	2496.345	3744.518	374 51	3744.518	4992.69	4992.69	4992.69	4992.69
15	33661126	Ցիտրամոն Պ դ/հ № 6				795	795	795	1192.5	2	1192.5	1590	1590	1590	1590
16	33691176/2	Գլիցերին մոմիկ 1գ № 10				1143.2	1143.2	1143.2	1714.8	4	1714.8	2286.4	2286.4	2286.4	2286.4
18	33691212/3	Տուրբո Միկրոն Ջի դ/հ № 60				8464.5	8464.5	8464.5	12696.75	1269 .75	12696.75	16929	16929	16929	16929
19	33691813/	Թեոտարդ դ/պ 200մգ № 40				760.75	2760.75	2760.75	4141.125	414 23	4141.125	5521.5	5521.5	5521.5	5521.5
26	33661125	Սպազմատոն դ/հ №50				33950	33950	33950	50925	5 2	50925	67900	67900	67900	67900
31	33661122/	Պենտալգին թ/պ դ/հ №12				20868	20868	20868	31302	3 02	31302	41736	41736	41736	41736
32	33631360	Դիտիլին ամպ. 20մգ/մլ 5 մլ №10				4147.5	4147.5	4147.5	6221.25	62 2	6221.25	8295	8295	8295	8295

** Վճարման ենթակա գ ները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ
«Քաջարա ժշկական կենտրոն»ՓԲԸ
Հասցե՝ ստան, Բակունցի 1
Բան մերիաբանկ»ԲԲԸ
Հ 70025402170100
ՀՀ 09417527
Տնօ Մ.Պետրոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Նատալի ֆարմ»ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան,Օհանովի 15/1
Ամերիաբանկ ՓԲԸ
h/h 15700050653301000
ՀՎՀՀ 01222567
Տնօրեն Ա.Ասատրյան
/ստորագրություն/
Կ.Տ